



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

13 նոյեմբերի 2018 թվական

1-ԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ԴՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

### ՍՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 15.50

#### Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամներ, հարց ու պատասխանի համար գրանցվել են  
ավագանու 21 անդամ՝

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Գայանե Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն

Իզաբելլա Աբգարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սուրեն Էյրամջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Գայանե Մելքոմ Մելքոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Գալջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Գայանե Աբրահամյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Էռնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Նարինե Խաչատուրյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Լուսինե Գևորգյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Հասմիկ Խաչունց՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Արսեն Կարապետյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Էդգար Բարսեղյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,  
Լևոն Հովհաննիսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:  
Առաջին հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

### **Դավիթ Խաժակյան**

-Առաջին հարցս վերաբերում է փակ բաժնետիրական ընկերություններին, մասնավորապես, Երևանի մետրոպոլիտենին: Պարոն քաղաքապետ, մենք մշտապես բարձրաձայնել ենք մի խնդրի մասին, որ փակ բաժնետիրական ընկերություններն օգտվում են Երևանի կողմից հատկացված բյուջեի զգալի մասից և բազմաթիվ ընթացակարգերով, շատ ավելի պակաս թափանցիկ են, քան համայնքային բյուջեն է տնօրինվում: Բազմիցս բարձրաձայնել ենք, որ համայնքապատկան փակ բաժնետիրական ընկերություններում առկա են բազմաթիվ ռիսկեր, ուռճացված հաստիքացուցակներ, որոնք, բնականաբար, էլ ավելի մեծ բյուջե են պահանջում:

Վերջերս որոշակի տեղեկատվություն ստացանք, ինչպես նաև բողոքներ Երևանի մետրոպոլիտենից, որը պատվիրակված լիազորություն է Երևան համայնքին: Այդ տեղեկությունների համաձայն՝ աշխատակիցների յուրաքանչյուր ամսվա աշխատավարձից պահվում է որոշակի գումար, այսպես կոչված, գթության ֆոնդի համար և այդ տոկոսները, որոնք վճարվում են, պայմանականորեն մեկ տոկոս աշխատավարձից, բնականաբար, տնօրինվում են անհասկանալի կերպով, ոչ թափանցիկ:

Մեր ունեցած տեղեկությունների համաձայն՝ սա տեղի է ունենում Երևանի մետրոպոլիտենում, որին կցված է նաև վեց ավտոմեքենա, որոնց, ընդհանուր առմամբ, 4000-4500լ վառելիք է տրամադրվում: Կրկին մեր տեղեկություններով՝ այս մեքենաների մի մասն է շահագործվում, մյուս մասը, պարզապես, մղսում են Երևանի բյուջեի կողմից տրամադրված գումարները:

Սա որպես տեղեկատվություն եմ փոխանցում Ձեզ՝ խնդրելով համայնքապատկան կառույցում որոշակի ուսումնասիրություն կատարել: Հարցս, ընդհանուր առմամբ, վերաբերում է ՓԲԸ-ներին:

Չե՞ք կարծում, արդյոք, որ անհրաժեշտություն կա փակ բաժնետիրական ընկերությունների գործառույթները վերանայել, որը կանաչապատման մասով է դառնա վարչական շրջանի մի մաս, քանի որ ունենք կանաչապատման փակ բաժնետիրական ընկերություններ, որը տրանսպորտին է վերաբերում, անմիջականորեն, որպես տրանսպորտի վարչության մի մաս, ենթարկվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչությանը: Չե՞ք կարծում, որ այստեղ ունենք օպտիմալացման խնդիր:

### **Հայկ Սարույան**

-Այո՛, բնականաբար, պիտի վերանայենք բոլոր այդ ՓԲԸ-ների գործառույթները, նախ հարկավոր է աուդիտ անցկացնել: Այս կարճ ժամանակահատվածում հնարավոր չի եղել ամեն տեղ սկսել աուդիտ իրականացնել, տեղեր կան, որտեղ սկսվել է, տեղեր էլ կան, որտեղ աշխատանքներն ընթացքի մեջ են: Գործընթացը պետք է լինի ավելի թափանցիկ:

Հարցին մանրամասն կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը, խնդրե՛մ:

### **Հայկ Սարգսյան**

-Շարունակելով քաղաքապետի խոսքը, ասեմ, որ օրերս քննարկում ենք ունեցել փակ բաժնետիրական ընկերությունների կարգավիճակի, բյուջետավորման, առհասարակ ֆինանսական հոսքերի և արդյունավետության խնդիրների շուրջ: Ինչպես նշեց քաղաքապետը, առաջիկայում պլանավորում ենք վերանայել ամբողջ փակ բաժնետիրական ընկերությունների ինստիտուտը, հայեցակարգը և կոնցեպցիան: Արդյունքում պլանավորում ենք թողնել այն ընկերությունները, որոնք տնտեսապես արդարացված բաժնետիրական գործունեություն են իրականացնում: Դրանք, ըստ էության, նաև լուծում են քաղաքապետարանի համար բազմաթիվ հարակից խնդիրներ, որոնց լուծումը քաղաքապետարանի սեփական անձնակազմի համար մեծ դժվարություն և ավելի մեծ ծախսեր է ենթադրելու:

Բնականաբար, այս ողջամտությունը կպահպանվի, բայց վերանայումներ և օպտիմալացում այդ համակարգում նախատեսվում է:

Ինչ վերաբերում է Երևանի մետրոպոլիտենին, այս պահին բազմաթիվ են խնդիրները: Բազմաթիվ բաժնետիրական ընկերություններից և ՀՈԱԿ-ներից ունենք աուդիտի անցկացման պահանջարկ: Իրականությունը հետևյալն է. մեր աուդիտի ռեսուրսը

Ֆիզիկապես չի բավականացնում, որ մենք, ըստ պահանջի, այդ աուդիտներն իրականացնենք և իրավիճակն ավելի արագ տեսանելի և թափանցիկ դարձնենք: Սակայն պլանավորված է, ինչպես մետրոպոլիտենի, այնպես էլ մի քանի պոլիկլինիկաների, թատրոնների և այլնի համար:

Այս պահին աուդիտը մտնելու է թատրոն, մի քանի օր հետո կմտնի պոլիկլինիկա և այլ վայրեր, այսինքն այս աուդիտի պլանը վերահաստատելու անհրաժեշտություն կա: Ներկայումս այն կառուցվածքն ու սխեման, որը հաստատված է, դրա շրջանակում տեղավորում ենք աուդիտը: Կներկայացնենք վերահաստատման աուդիտի ծրագիրը և հնարավոր է քաղաքապետին խնդրեմ վերանայել աուդիտի կազմի չափը, քանի որ եղած ռեսուրսն ուղղակի չի բավարարում:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալությու՛ն, պարոն Մարգարյան, ռեսուրսը, որ մենք մաքսիմալ օգտագործում ենք, որպեսզի արագացնենք գործընթացը, չի բավարարում և մեզ հարկավոր են կամ աութոթրս ընկերություններ, որոնք վճարովի հիմունքներով կգործեն, կամ ուղղակի հարկավոր է մեծացնել մեր ռեսուրսները:

### **Հայկ Մարգարյան**

-Այո՛, պարոն քաղաքապետ, քաղաքապետարանում ունենք ընդամենը երեք աուդիտոր: Ներքին աուդիտի միջազգային փորձն ու կանոնակարգն ուսումնասիրելիս՝ կտեսնենք, որ այս ծավալի աշխատանքի համար առնվազն քսան աուդիտոր է հարկավոր, որպեսզի աուդիտը կանոնակարգող ստանդարտով գոնե տարին մեկ անգամ աուդիտի ենթարկենք: Հակառակ դեպքում տեսեք ինչ է տեղի ունենում. աուդիտը գնում է, ստիպված է լինում որպես ստուգման ժամանակահատված վերջին 5 տարին ընդգրկել, որը ֆիզիկապես հնարավոր չէ այն ժամանակահատվածում, ինչ որ մենք կարող ենք տրամադրել, սա է խնդիրը:

Աութոթրսի հետ կապված ևս ունենք օրենսդրական խնդիր, որովհետև համայնքային ծառայության օրենսդրությունը դժվարացնում է դրսից մասնագետների, փորձագետների ներգրավումը, քանի որ դա պետք է արվի միայն հաստիքացուցակի վերանայման միջոցով:

### **Դավիթ Խաժակյան**

-Որպես արձագանք, ընդունեք սա որպես հրապարակային բաց դիմում, քանի որ Երևանի մետրոպոլիտենը բավականին մեծ հիմնարկ է և մեծ բյուջե է տնօրինում, կարծում եմ նպատակահարմար կլինի այս փակ բաժնետիրական ընկերությունը դիտարկել առաջնահերթության կարգով:

Պարոն քաղաքապետ, երկրորդ հարցս հնչեցնեմ: Քիչ առաջ իմ գործընկեր Անի Սամսոնյանը նշեց, որ գնում է դպրոց, որտեղ կայանալու է դպրոցի տնօրենի մրցույթ: Ինձ տեղեկացրին, որ նրան հնարավորություն չի ընձեռվել մուտք գործել դպրոց և այդ գործընթացը վերահսկել: Նախկինում մենք պարբերաբար բախվում էինք այսպիսի իրավիճակների, երբ որպես ավագանու անդամ, ով ունի որոշակի վերահսկողական գործառույթ, չէինք կարողանում այդ գործառույթները կյանքի կոչել: Քանի որ երբ ցանկանում էինք որևէ հիմնարկ մտնել մեզ չէին պարտադրում, բայց գոնե խնդրում էին նախապես տեղեկացնել, որ այնտեղ ենք այցելելու և, բնականաբար, այդպիսի այցելությունների օգտակար գործողության գործակիցը բավականին ցածր էր:

Հարցս վերաբերում է կոնկրետ այս դեպքին, կրթական հաստատություններին: Ես ցանկանում եմ լսել հետևյալ հարցի պատասխանը. արդյոք ավագանու անդամն այդպիսի սահմանափակման ենթարկվելու խնդրի առաջ կարող է կանգնել, որ նրան թույլ չտրվի մասնակցել, օրինակ, դպրոցի տնօրեն ընտրելու մրցույթին կամ որևէ այլ մրցույթի, այդ թվում և գնումների մրցույթին, որն իրականացնում է Երևանի քաղաքապետարանը: Հարցս առաջնային վերաբերում է կրթական հաստատությունների ղեկավարներ ընտրելու մրցույթին:

#### **Հայկ Մարության**

- Այս գործընթացը կրթության և գիտության նախարարության հետ է իրականացվում, քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը կներկայացնի, խնդրե՛մ:

#### **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալ եմ հարցի համար, պարոն քաղաքապետ: Խնդրի բարձրաձայնումից հետո խնդրել եմ հանրակրթության վարչության պետին հետաքրքրվել ինչի մասին է խոսքը: Հանրակրթության վարչության պետ տիկին Ստեփանյանն ավելի հանգամանորեն կներկայացնի, շնորհակալությու՛ն:

#### **Աննա Ստեփանյան**

-Պարոն քաղաքապետ, ներկայացնեմ, որ գործում է կառավարության որոշում, ըստ որի՝ ավագանու ցանկացած անդամ կամ որևէ լրագրող, եթե ցանկություն ունի մասնակցել տնօրենի մրցույթին պետք է նախապես, մինչև գործերի ընդունման օրը, գրանցվի, այլապես իրավունք չունի որպես դիտորդ մասնակցել մրցույթին: Պետք է նախապես ներկայացնի այն ամբողջ փաթեթը, որը պահանջվում է կառավարության որոշմամբ տվյալ կարգի մեջ, եթե հետաքրքիր է կարող եք ծանոթանալ՝ ՀՀ կառավարության մարտի 4-ի հ. 319-Ն որոշումն է:

Կարող եք նայել, կարգով դա սահմանափակվում է և ավագանու լիազորությունների մեջ չի մտնում վերահսկել մրցույթի անցկացման կարգը, իսկ, եթե որպես դիտորդ

ցանկություն ունի մասնակցելու, ապա նախապես պետք է գրանցվի: Խորհրդի նախագահին պետք է նախապես գրավոր դիմում ներկայացվեր, ինչը չի կատարվել, այդ իսկ պատճառով նրան թույլ չեն տվել մասնակցելու տնօրենի ընտրություններին:

### **Դավիթ Խաժակյան**

-Արձագանքեմ, բնականաբար, կառավարության այդ որոշմանը ծանոթ ենք, որը վերաբերում է բացառապես զանգվածային լրատվության միջոցներին: Տարօրինակ է, որ ավագանու անդամի գործառույթները կարող են նման վերագրում ունենալ:

Պարո՛ն քաղաքապետ, շատ հաճախ, երբ այս ընթացքում նման խնդիրների ենք բխվում, հասկանում ենք, որ դեռևս այդ իրավիճակին հանգամանալից ծանոթանալու համար Ձեզ ժամանակ է անհրաժեշտ: Այդ պատճառով այս հարցի հասցեատերը, քանի որ հարցը ընթացիկ կարգավորումներով է ուղղվում, դուք չեք, սակայն այստեղ ունենք իրավական խնդիր, անհասկացվածություն, կառավարության որոշման մեջ չի նշվում, թե ավագանու անդամն ինչպիսի սահմանափակումների կարող է ենթարկվել, բայց, այնուամենայնիվ, ենթարկվում է:

Կարծում եմ, որ, որպես աշխատակազմի գործունեություն, մեր խմբակցությունը պետք է դիմի վարչական դատարան, որպեսզի մենք կարողանանք մեր վերահսկողական լծակների այդ հնարավորությունը վերականգնել: Ինչպես ասացի, եթե կարողանանք քննարկումներով այս հարցին լուծում տալ ավագանու շրջանակում կամ նախարարության հետ քննարկումներով, բնականաբար, կնախընտրենք դա: Հակառակ դեպքում ստացվում է, որ մեր լիազորությունները սահմանափակվում են և, որպես վերահսկողական որոշակի մանդատ ունեցող քաղաքային իշխանության ներկայացուցիչ, անգոր ենք դառնում և, պարզապես, դիտորդի կարգավիճակում ենք հայտնվում, ինչպես նշեց տիկին Ստեփանյանը: Մենք դիտորդ չենք, մենք ավագանու անդամներ ենք, ովքեր պետք է իրենց լիազորությունների ամբողջ ծավալով վերահսկեն:

### **Աննա Ստեփանյան**

-Այդ պարագայում պետք էր հայտ ներկայացնել կրթության և գիտության նախարարություն, որպեսզի որոշակի փոփոխություններ կատարվեն կարգում, միայն այդ պարագայում կկարողանանք նմանատիպ լիազորություններ ունենալ: Վարչության աշխատակիցը դիտորդի կարգավիճակով է ներկայանում մրցույթին, նախարարության ներկայացուցիչը նախարարի հրամանով արձանագրված գրությամբ միայն կարող է ներկայանալ այդ մրցույթին: Այդ պատճառով այս պահին հարցը մեր դաշտում չէ:

## **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն, ես կխնդրեմ իրավաբանական վարչության պետին իրավական մասով ինձ ներկայացնել ինչպես է այս հարցը կարգավորվում:

Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրե՛մ:

## **Մարկոս Հարությունյան**

-Շնորհակալություն՝ն, հարգարժան քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, կցանկանայի խոսել մի խնդրի մասին, որը շտապ լուծում է պահանջում:

Պարո՛ն քաղաքապետ, կցանկանայի ուշադրություն դարձնեք այս հարցին:

Ուսումնասիրել եմ Աջափնյակ վարչական շրջանում գործող մանկապարտեզներում մատակարարվող սննդամթերքի՝ հատկապես հացի որակը, այնտեղ, բառիս բուն իմաստով, խառնաշփոթ է տիրում: Հաց մատակարարող ընկերության կողմից սահմանված կարգով ոչ մի նորմատիվ չի պահպանվում: Եղել են բազմաթիվ գրություններ՝ ուղղված Երևանի քաղաքապետարանի գնումների վարչության պետ Չթրյանին թե՛ մանկապարտեզների տնօրենների կողմից, թե՛ վարչական շրջանի ղեկավարի կողմից: Նոր տեղեկացա, որ պարոն Չթրյանն ազատվել է աշխատանքից:

Երեխաներին այնպիսի հաց է մատակարարվում, որը հնարավոր չէ ուտել, պատկերացում կազմելու համար ինձ հետ բերել եմ երեխաներին մատակարարվող հացը, որպեսզի ավելի լավ պատկերացնեք տիրող իրավիճակը: Կցանկանայի պարզաբանեիք ո՞ւմ տիրություն է գտնվում այս հարցը, որպեսզի չարաշահումների ժամանակ տեղեկացնենք: Շնորհակալություն՝ն:

## **Հայկ Մարության**

-Շնորհալություն՝ն: Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

## **Տիգրան Վիրաբյան**

-Շնորհակալություն՝ն հարցի համար:

Պարո՛ն քաղաքապետ, այս հարցը 2018թ. մի քանի անգամ բարձրացվել է, մանկապարտեզների տնօրենների կողմից վարչական շրջանի ղեկավարին ուղղված նամակներում: Կան հացի որակը բնութագրող լուսանկարներ, բայց ինչպես տեսնում ենք մինչև հիմա տվյալ մատակարարը դեռ հանդիսանում է որպես մատակարար:

Ինձ մոտ եղած գրությունը նոյեմբերի 7-ի գրություն է վարչական շրջանի ղեկավարից, որը ներկայացնում է մանկապարտեզների տնօրենների կարծիքը մատակարարվող հացի վերաբերյալ: Մանդի անվտանգության պետական տեսչության աշխատակիցները 42

մանկապարտեզում հացը մատակարարելու ժամանակ հայտնաբերել են, որ հացը մատակարարվում է բնութագրին ոչ համապատասխան վիճակում, սանիտարահիգիենիկ նորմերի խախտմամբ, ինչպես նաև վարորդի սանգրքույկը ժամկետանց է եղել: Այդ պահից սկսած դադարեցվել է «Արմավիր կաթ» ընկերության գործունեությունը, ավտոմեքենաները դրվել են կալանքի տակ:

Ինչպես տենդերի պայմանագրում նշված է, տվյալ կազմակերպությունն ունի երկու օր ժամանակ նշված խնդիրները վերացնելու համար: Երկու օրվա ընթացքում մեկ անձից գնում է իրականացվել, որպեսզի մանկապարտեզի բնականոն ընթացքը չխաթարվի: Այնուհետև կազմակերպությունն իրավունք ունի դիմելու, որպեսզի ինքը վերականգնի իր մատակարարման գործընթացը, նաև վերացրած լինի գոյություն ունեցող բոլոր խնդիրները:

Վարչական շրջանի ղեկավարների հետ խոսել եմ, վարչական շրջանի ղեկավարը նշում է, որ մանկապարտեզներն ուղղակի ցանկություն չունեն հացն ստանալու, բնականաբար, նաև օբյեկտիվ պատճառներով: Սակայն մենք չենք կարող շրջանցելով օրենքը, արգելել մատակարարին իր թույլ տված թերություններն ուղղել և մատակարարել հաց: Չնայած պետք է նշեմ, որ լուծարման գործընթացի հիմքերը կան, և գործընթացն արդեն սկսվել է: Երեկ տվել եմ համաձայնություն, որ չենք առարկում պայմանագրի լուծմանը, սակայն, եթե մատակարարը ցանկություն է հայտնել օրենքով սահմանված կարգով վերականգնել մատակարարումը, մենք ուղղակի իրավունք չունենք չթույլատրելու, քանի որ անօրինականությամբ չենք կարող օրինականություն հաստատել:

Հիմա լուծարման գործընթացն ընթացքի մեջ է, այսօր վարչական շրջանի մանկապարտեզին նորից մատակարարվել է հաց: Վարչական շրջանի ղեկավարը տեղեկացրել է, որ հացը նորից եղել է բնութագրին ոչ համապատասխան: Պարոն Սարգսյանի հետ խնդիրը քննարկել ենք, հուսով եմ մոտ ժամանակահատվածում խնդիրը վերջնական կհանգուցալուծվի:

Այս խնդրի վերջնական հանգուցալուծումը կունենանք, երբ նոր տենդերներ կհայտարարվեն, և նոր մարդիկ կներգրավվեն այս աշխատանքներում:

### **Մարկոս Հարությունյան**

-Պարո՛ն քաղաքապետ, իհարկե շատ ողջունելի է, որ գործընթացն սկսվել է: Ինչպես նշեց պարոն Վիրաբյանը, մատակարարող ընկերությունը երկու օր իր աշխատանքը դադարեցրել էր, սակայն երկու օր դադարից հետո, այսօր էլ մատակարարող ընկերությունը կրկին ավելի վատ հաց է մատակարարել, քան նախկինում էր:

Պարո՛ն քաղաքապետ, մտահոգողն այն է, որ նույն մատակարարը նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզներին է հաց մատակարարում: Սակայն



ի տարբերություն Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզների տնօրենների, ովքեր շատ բողոքներ են ունենում մատակարարի վերաբերյալ, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզների տնօրենների կողմից ընդհանրապես արձագանք չի եղել:

Կարող եմ ենթադրել, որ մատակարարները տարբեր են: Պարոն Վիրաբյանը նշեց, որ Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզներում հացը մատակարարում է «Արմավիր կաթ» ընկերությունը, սակայն պաշտոնապես հայտարարում եմ, որ Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզներում հացը մատակարարվել է «Ալբերտ Ալեքսանյան» ՍՊԸ-ի կողմից. պարոն քաղաքապետ, կցանկանայի այս մասին իմանայիք:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանից, եթե բողոք չի եղել, կարող եմ ենթադրել, որ այնտեղ էլ կարող է Պողոս Պողոսյանի կողմից է հացը մատակարարվել, ով ի տարբերություն «Ալբերտ Ալեքսանյան» ընկերության, ավելի բարեխիղճ է գտնվել երեխաների հանդեպ: Կցանկանայի պատասխանեին, արդյոք տեղյակ են, թե ո՞վ է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզներում հաց մատակարարում:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար Դավիթ Կարապետյանը:

### **Դավիթ Կարապետյան**

-Ես Ալբերտ Ալեքսանյանի հետ խոսել եմ, իրենք են մատակարարում, քանի որ իրենց մատակարարման դադարեցման օրը զուգահեռ դադարեցվել էր նաև Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում: Նրա հետ խոսելուց հետո շտկեցինք խնդիրը, ըստ էության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում խնդիրը միայն տրանսպորտային միջոցի հետ է կապված եղել, ավտոմեքենան չի համապատասխանել փոխադրման ստանդարտներին:

Մանկապարտեզների տնօրենների հետ անձամբ խոսել եմ, նրանցից ոչ ոք դժգոհություն չի հայտնել հացի որակից: Միգուցե Աջափնյակ վարչական շրջանում է այլ ընկերություն մատակարարման գործընթաց ծավալում:

### **Հայկ Մարության**

-Քանի դեռ նման խնդիր կա, կխնդրեմ խստացնել այս հարցի վերահսկողությունը: Պետք չէ սպասել միայն մանկապարտեզների տնօրենների արձագանքին, այլ ստեղծենք մի խումբ, որը կստուգի հացի որակը: Նույնն Աջափնյակ վարչական շրջանում պետք է լինի, ուշադիր ենք, պարոն Վիրաբյան, երկու օրը ե՞րբ է ավարտվում:

### **Տիգրան Վիրաբյան**

-Պարոն քաղաքապետ, երկու օրն արդեն ավարտվել է, այսօր այն ժամկետն է լրանում, երբ իրավունք ունեք հաց մատակարարելու, նորից ցածր որակի հաց է

մատակարարել: Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների մասով թույլ տվեք ասել, որ «Արմավիր կաթ» ընկերությունն իր լիազորությունները պատվիրակել է երկու այլ կազմակերպության, որի իրավունքն ունի: Ամեն դեպքում քաղաքապետարանի առաջ իրավական պատասխանատվություն ունի «Արմավիր կաթ» ընկերությունը:

#### **Մարկոս Հարությունյան**

-Կիսնդրեմ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավարին անձամբ գնալ մանկապարտեզ և համոզվել նորմալ է հացի որակը, թե՛ ոչ: Հացը ինձ հետ բերել եմ, եթե թույլ կտաք հացը և թղթերը փոխանցեմ Ձեզ: Հացը թխվում է հացի մեկ արտադրամասում և չեմ կարող հասկանալ, ինչպես կարող է տարբերվել Աջափնյակ վարչական շրջանի մանկապարտեզներին մատակարարվող հացը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի մանկապարտեզներին մատակարարվող հացից, եթե այդպես է արվել, ինչու՞ է տարբերություն դրվել երկու վարչական շրջանների միջև:

#### **Դավիթ Կարապետյան**

-Ես եղել եմ մանկապարտեզներում, տեղում նայել եմ հացը և աչքի համար տեսանելի որևէ խնդիր չեմ նկատել: Այս դեպքում կարծում եմ հարկավոր է ավելի մանրամասն ուսումնասիրություն իրականացնել: Կիսնդրեմ մանկապարտեզների տնօրեններին, որպեսզի վաղվա հացը բոլորը նկարեն և «վայբեր» հեռահաղորդակցության միջոցով ուղարկեն ինձ, այս կապի միջոցով աշխատանքային խումբ ենք ստեղծել բոլորի հետ: Թերություններ լինելու դեպքում կտեղեկացնեմ Ձեզ:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն, պարոն Վիրաբյան, երկու օրը, որ անցել է այդ ընկերությունն այլևս հաց չի՞ մատակարարելու:

#### **Տիգրան Վիրաբյան**

-Քանի որ այդ ընկերության ուղղվելու հնարավորությունն այլևս սպառված է, այսօրվանից այդ մանկապարտեզները մեկ անձից գնմամբ ձեռք են բերում հաց, որը կշարունակվի մինչև դեկտեմբերի վերջ: Գնման հայտերը պետք է կարգավորվեն և 2019թ կրնտրվի համապատասխան ընկերություն:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն: Ցավոք սրտի նման ժառանգություն ենք ստացել և կվերանայենք այդ գործընթացը:

#### **Մարկոս Հարությունյան**

-Պարո՞ն քաղաքապետ, իմ կողմից բարձրացված հարցի մեջ Ձեզ, ինչպես նաև քաղաքային նոր իշխանությանն ուղղված մեղադրանքներ չկային: Պարզապես ստանձնել եմ

նման առաքելություն, որպեսզի օգնեմ Ձեզ, և Ձեր ուշադրությունը հրավիրեմ եղած խնդիրների վրա:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, պարոն Հարությունյան:

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Վարդանյան, խնդրե՛մ:

### **Գայանե Վարդանյան**

-Շնորհակալություն: Երկու հարց ունեմ: Առաջինը ցանկանում եմ ուղղել սոցիալական ապահովության վարչության պետ տիկին Ռուզաննա Զաքարյանին: Ցանկանում եմ հասկանալ, տարիներ շարունակ, գրեթե նույն ուղղությամբ իրականացվող սոցիալական ծրագրերն արդյոք ենթարկվում են ազդեցության գնահատման, եթե այո՛, որտեղ կարելի է ծանոթանալ արդյունքներին, իսկ եթե ոչ, ապա ի՞նչ սկզբունքով են առաջարկվում հաջորդ տավա զարգացման ծրագրերը սոցիալական աջակցության ուղղությամբ:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, սոցիալական ապահովության վարչության պետ տիկին Ռուզաննա Զաքարյան, խնդրե՛մ:

### **Ռուզաննա Զաքարյան**

Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, ասեմ, որ այս հարցը նախկինում տիկին Գայանեի հետ քննարկել ենք: Սոցիալական ապահովության վարչության և ընդհանրապես ոլորտի գործունեությանը վերաբերող ծրագրերը կազմվում են Երևանի զարգացման հնգամյա ծրագրերի շրջանակներում:

Հաշվի առնելով երկրում, ինչպես նաև մայրաքաղաքում, աղքատության բարձր մակարդակը, բոլոր ծրագրերի կազմման հիմքում դրված է մեկ բան՝ այդ ծրագրերով հնարավորինս հասնել նրան, որպեսզի կարողանանք մայրաքաղաքում կայունացնել սոցիալական միջավայրը՝ աղքատության հնարավոր կրճատման և այդ ռիսկերի կայունացման միջոցով:

Ծրագրերը տարաբնույթ են. հիմնականում երկու ուղղություններով են իրականացվում: Առաջինը՝ պետության կողմից պատվիրակված լիազորությունների մասով սոցիալական աջակցությունների տարածքային բաժինների միջոցով, որոնք իրականացնում են կարիքավոր բնակչության հաշվառումը և պետական նպաստների նշանակումը: Երկրորդը՝ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքի համաձայն՝ քաղաքապետի կամավոր լիազորությունների շրջանակում, իրականացվում են ծրագրեր, որոնք դարձյալ միտված են կարիքավոր շերտերի սոցիալական վիճակի բարելավմանը:

Ծրագրերը հիմնականում իրականացվում են տոնական, հիշատակի օրերի կապակցությամբ: Ծրագրերում առաջնային ուշադրություն են դարձվում հաշմանդամություն ունեցող մարդկանց խնդիրներին, տարեցներին, ծնողագուրկ երեխաներին, պատերազմի վետերաններին, պատերազմում զոհվածների ընտանիքներին, կարիքավոր սիրիահայ ընտանիքներին, անօթևաններին, սահմանները պաշտպանող զինծառայողների ընտանիքներին և մնացած բոլոր սոցիալական շերտերին:

#### **Գայանե Վարդանյան**

-Իմ հարցն իրականում ազդեցության գնահատման մասին էր: Տարիներ շարունակ դուք տարբեր ուղղություններով՝ մարտի 8, ապրիլի 7, սիրիահայերին աջակցություն և այլ ծրագրեր եք իրականացնում: Նշեմ, որ այս մասին, տիկի՛ն Ջաքարյան, մենք երբևէ քննարկում չենք ունեցել:

Ես ցանկանում եմ հասկանալ այդ ծրագրերի ազդեցությունը. արդյոք մենք գնահատում ենք, որ ծախսում ենք X քանակությամբ գումար և փորձում ենք դրանով փոխել X թվով մարդկանց կյանքը: Ունենք, արդյոք, նման գնահատում, թե՞ այդ գումարը ծախսելու արդյունքում այդ մարդկանց կյանքը փոխվեց, թե՞ ոչ: Ես ունեմ ենթադրություն, որ չփոխվեց, ինչպես նաև ենթադրում եմ, որ երբևէ նման ազդեցության գնահատում չի արվում: Այն ինչ Դուք ներկայացնում եք կայքում գրված է, և ես այդ ամենը կարդացել եմ: Դա տեսական հիմքն է, ես կցանկանայի մենք հասկանանք, թե ինչքանով է մեր քաղաքականությունն արդյունավետ և արդյոք այն միտված է մարդկանց կյանքը բարելավելուն:

#### **Ռուզաննա Ջաքարյան**

-Այո՛, ազդեցության այդպիսի գնահատում չի իրականացվել, բայց ցանկացած ծրագրի իրականացման հիմքում դնում ենք սոցիալական էֆեկտը: Ցանկացած ծրագիր միտված է նրան, որպեսզի մեք ստանանք թեկուզ փոքրիշատե, բայց սոցիալական էֆեկտ: Եվ այո՛, այդ էֆեկտը չի կարող շատ բարձր լինել, քանի դեռ, երկրում կա գործազրկության, աղքատության այսպիսի մակարդակ և ունենք տնտեսության առկա իրավիճակ: Տնտեսական զարգացումից է կախված և՛ աղքատության կրճատումը, և՛ ընդհանրապես սոցիալական վիճակի բարելավումը:

#### **Գայանե Վարդանյան**

-Այս հարցին քանի որ այլևս արձագանքելու իրավունք չունեմ, կհնչեցնեմ երկրորդ հարցս, որն ուղղված է Ավան վարչական շրջանի ներկայացուցչին:

Ծարավ Աղբյուրի փողոցի շրջանում, գիտեք, որ վերջին տարիներին մեծ թաղամաս է գոյացել, հիմնականում երիտասարդ ընտանիքներից բաղկացած:

2013թ. ունեինք խոստում, որ այդտեղ կառուցվելու է զբոսայգի և մանկական պուրակ, բայց դրա փոխարեն ունեցանք նոր բազմաբնակարան շենք և ուսումնամարզական համալիր: Այդուհանդերձ, կա որոշակի տարածք, որտեղ մի օր հուսանք պետք է այգի կառուցվի: Ուզում եմ հարցնել, արդյոք, նախատեսվում է այգու, պուրակի կառուցումը, եթե այո՝ ապա ե՞րբ, և եթե կա նախագիծ, որտեղ կարող ենք ծանոթանալ:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն, հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Սամվել Ղումաշյանը, խնդրե՛մ:

#### **Սամվել Ղումաշյան**

-Այդտեղ, իսկապես, ծրագրով նախատեսված է եղել այգու կառուցման աշխատանքներ: Հետագայում տարածքը հատկացվել է «Գազպրոմ Արմենիա» ընկերությանը, որտեղ հիմա իրականացվում են ուսումնական կենտրոնի, նախադպրոցական հիմնարկի և մարզական համալիրի շինարարություն: Ծրագրով այնտեղ այգու և խաղահրապարակի կառուցում նախատեսված եղել է:

#### **Հայկ Մարության**

-Այս պահին Ավան վարչական շրջանում այգի կառուցելու ծրագիր կա՞:

#### **Սամվել Ղումաշյան**

-Ո՛չ:

#### **Հայկ Մարության**

-Շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյան, խնդրե՛մ:

#### **Գրիգոր Հարությունյան**

-«Գազպրոմ Արմենիա» ընկերության կողմից իրականացվող շինարարության հարակից տարածքում Երևանի քաղաքապետարանն ունեցել է 5500 քմ հողային տարածք, որը 06.06.2018թ. օտարվել է «Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» կազմակերպությանը:

#### **Հայկ Մարության**

-Հասկանալի է, օտարվել է, այլևս համայնքի սեփականություն չի հանդիսանում:

#### **Գրիգոր Հարությունյան**

-Այո՛, այժմ աղբավայրի է վերածվել:

#### **Գայանե Վարդանյան**

-«Երևանի պետական համալսարանի շրջանավարտների միավորում» կազմակերպությունը հիմանկանում այդ շենքերի կառուցապատումն է իրականացրել,

սակայն օտարումը եղել է պայմանով, որ այդտեղ պետք է կառուցվի զբոսայգի և պուրակ: Հիմա, փաստորեն, տվյալ կազմակերպությունը կամ չի կատարում իր պարտավորությունը բնակիչների և, մասնավորապես, քաղաքի հանդեպ, կամ այնտեղ ուրիշ նախագծեր ունի: Ես կարծում եմ, այս հարցին պետք է հետևողականորեն արձագանքենք, հասկանալու համար թե ի՞նչ է այնտեղ տեղի ունենալու: Այո՛, ճիշտ է նշվում, այժմ այնտեղ աղբավայր է:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՛ն, ցավոք սրտի, ես տեղյակ եմ նաև այլ վայրերից, որտեղ շինարարները չեն կատարում պայմանագրով նախատեսված իրենց պարտականությունները: Այդ բոլոր կառուցապատող ընկերությունները խստորեն զգուշացվել են, որպեսզի կատարեն իրենց պարտականությունները, այլապես տույժեր, տուգանքներ կկիրառվեն, մինչև անգամ օրենքի սահմաններում հետ կվերադարձվեն համայնքի հողերը:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան:

Անի Խաչատրյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Միքայել Մանրիկյանին, խնդրե՛մ:

### **Միքայել Մանրիկյան**

-Շնորհակալություն՛ն պարոն քաղաքապետ: Ավագանու հարգելի՛ անդամներ, մասնավորապես կցանկանամ խոսել առողջապահական ոլորտին վերաբերող մի շատ կարևոր հարցի մասին: Գաղտնիք չէ, որ Երևան քաղաքի ամբուլատոր պոլիկլինիկաների գրեթե 90% գտնվում են անմխիթար վիճակում, ինչպես նաև ազգաբնակչությունը ոչ լիարժեք բուժսպասարկում է ստանում:

Առաջին հարցով, մասնավորապես, կանդիդատնամ դիմում-բողոքներին. ձեզ եմ ներկայացնում Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի 3-րդ շենքի բնակչուհի Անահիտ Վասիլյանի դիմում-բողոքը, որով նա հայտնում է, որ 2017թ. մայիսին իրեն սպասարկել են պետպատվերի շրջանակներում, իսկ այժմ դիմել է, որպեսզի ատամնաշարի պրոտեզավորում կատարվի, բայց իրեն մերժել են՝ պահանջելով, որ վճարում կատարի բուժսպասարկման համար: Կցանկանայի այն անձը, ում գործառույթների շրջանակում է այս հարցը, պարզաբաներ պետպատվերի սկզբունքները:

Երկրորդ հարցս վերաբերում է նրան, որ շատ ամբուլատոր պոլիկլինիկաներում, որոնց շենքերը համարվում են Երևան քաղաքի սեփականություն, այսօր շենքի մեջ կից գործում են ինչ-որ անհայտ կազմակերպություններ, որոնք տրված են անհատ մարդկանց:

Ցանկանում եմ հասկանալ, թե ինչ սկզբունքներով է դա տրված անհատ կազմակերպություններին, ինչ սկզբունքներով է վարձակալությունը ձևակերպված, արդյոք վարձակալության գումարները համապատասխանում են այն գումարներին, որոնք նշված են պայմանագրերի մեջ: Ինձ մտահոգում է այս հարցը, որովհետև ես այդտեղ տեսնում եմ որոշակի կոռուպցիոն ռիսկեր, շնորհակալությու՛ն:

### **Հայկ Մարության**

-Ձեր հարցին կպատասխանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը, խնդրե՛մ:

### **Կամսար Բաբինյան**

-Շնորհակալությու՛ն հարցի համար, առաջին հարցի հետ կապված, կխնդրեի մեզ տրամադրել դիմումի հեղինակ Անահիտ Վասիլյանի տվյալները, որովհետև, եթե նա ունի հաշմանդամության կարգ կամ որևէ սոցիալական խմբի է պատկանում, բնականաբար, պետք է սպասարկվեր անվճար, պետպատվերի շրջանակներում, իսկ եթե չունի, ապա պետք է սպասարկվի վճարովի:

Ինչ վերաբերում է պոլիկլինիկաների անմխիթար վիճակին, թույլ տվեք որոշ չափով Ձեզ հետ չհամաձայնել: Վերջին տարիներին բավականին աշխատանքներ են կատարվել առաջնային օղակում՝ թե՛ սարքավորումների առումով, թե՛ բժիշկների վերապատրաստման առումով, ինչպես նաև շենքային պայմանների բարելավման առումով: Չեմ կարող, բնականաբար, ասել, որ բոլոր հարցերը լուծված են, խնդիրները բավականին շատ են, այդ տեսանկյունից որոշակի առումով Ձեզ հետ համաձայն եմ:

Անրադառնալով Ձեր հարցի երկրորդ մասին պոլիկլինիկաների որոշ տարածքների վարձակալության հետ կապված՝ ասեմ որ վարձաչափը կառավարության որոշումով է սահմանվում, դրա հիման վրա դիմում են պոլիկլինիկա, այնուհետև տնօրենը նրանց ուղղորդում է Երևանի քաղաքապետարան:

Երևանի քաղաքապետարանի առողջապահության վարչությունում հաշվում են գումարները, նշանակվում է վարձաչափ և գումարները մուտք են արվում համապատասխան պոլիկլինիկա:

### **Միքայել Մանրիկյան**

-Շնորհակալությու՛ն, ես Ձեր ասածների հետ մասամբ կհամաձայնեմ, որովհետև կարող է մի պատ ներկենք, մանրահատակը ձևավորենք, սակայն դա դեռ չի նշանակում, որ մենք այնտեղ լիարժեք իրավիճակ ենք փոխել:

Պարո՛ն քաղաքապետ, առաջարկում եմ ստեղծել ժամանակավոր հանձնաժողով, որը կուսումնասիրի Երևան քաղաքում պոլիկլինիկաների վիճակը, որից հետո պարզ կդառնա թե՛

բուժսպասարկման ծառայությունների որակը, թե՛ վարձակալությամբ տրված տարածքների գումարները որքանով են համապատասխանում իրականությանը:

### **Կամսար Բաբինյան**

-Կցանկանայի նշել, որ տեղի է ունեցել ջեռուցման համակարգի բարելավում, ամբողջությամբ պատուհանների փոխարինման աշխատանքներ են իրականացվել: 2019թ. կավարտենք պոլիկլինիկաների առաստաղների վերանորոգման աշխատանքները, այսինքն կապիտալ վերանորոգման աշխատանքներ իրականացվել են, ինչպես նաև այս ընթացքում շուրջ 250 անվանում տարբեր բուժսարքավորումներ են նվիրաբերվել պոլիկլինիկաներին:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալությու՛ն պարոն Բաբինյան, ես երբեք չեմ ասում, որ նախկինում ոչինչ չի արվել, միշտ գնահատում եմ նախորդ իշխանությունների օրոք կատարված աշխատանքները, սակայն միևնույն է գնահատում եմ անբավարար:

Ես համաձայն եմ պարոն Մանրիկյանի հետ, որ դեռ պետք է շատ աշխատանքներ տարվեն այդ ուղղությամբ: Մենք պետք է ձգտենք, որ հանրությունը, մեր երևանցիները գոհ լինեն պոլիկլինիկաների աշխատանքից:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրե՛մ:

### **Լևոն Զաքարյան**

-Հարցս վերաբերում է վարչական շրջանների և սահմանամերձ գյուղերի միջև փոխհամագործակցությանը: Ես տեղեկացված եմ, որ նախկինում եղել է նման փորձ: Կցանկանայի ճշտել, արդյոք, եղել է նման համագործակցություն, ինչպես է դա իրականացվել, գուցե բանավոր պայմանավորվածությամբ՝ որպես բարի կամքի դրսևորում:

Կարծում եմ, որ շատ կարևոր է այդ համագործակցությունը, կլինի դա մշակութային, սպորտային, ինչու ոչ՝ նաև գործնական:

Կխնդրեի, որ ինձ տրվեր սպառիչ պատասխան. արդյոք եղել է այդպիսի փորձ, մասնավորապես, ո՞ր սահմանամերձ գյուղերի հետ են աշխատել վարչական շրջանները:

### **Հայկ Մարության**

-Վարչական շրջանների ղեկավարներ, եթե ունեք հստակ տեղեկատվություն այս մասին, կարող եք ներկայացնել կամ գրավոր պատասխանել:

Խնդրե՛մ, Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Արամ Դանիելյան:

### **Արամ Դանիելյան**

-Շնորհակալությու՛ն, Երևան և Ստեփանակերտ քաղաքների միջև համագործակցության ծրագրի շրջանակում Արաբկիր վարչական շրջանի կողմից ԼՂ Մարտունի քաղաքում կառուցվել է «Երևանյան» պուրակը:



Այդ ամենը, եթե չեմ սխալվում, կատարվել է Արաբկիր բարեգործական հիմնադրամի շրջանակներում, որը այլևս չկա: Այս պահին այսքան տեղեկատվության եմ տիրապետում, որովհետև տեղեկատվության ծավալները շատ մեծ են և ամեն ինչի վերաբերյալ անհրաժեշտ է ավելի խոր ուսումնասիրություն:

#### **Հայկ Մարության**

-Պարո՛ն Զաքարյան, կարող եք գրավոր դիմել՝ ավելի մանրամասն պատասխան ստանալու համար:

#### **Լևոն Զաքարյան**

-Շնորհակալությու՛ն, հավելեմ, որ ես հանդիսանում եմ «Աջակցենք սահմանամերձ բնակավայրերին» քաղաքացիական նախաձեռնության համակարգող խմբի անդամ: Ժամանակին այդ մասին մեզ տեղեկատվություն է տրամադրել քաղաքապետի օգնական Սամվել Մերթարջյանը:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալությու՛ն, հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրե՛մ:

#### **Արմեն Ներսիսյան**

-Մեծարգո՛ քաղաքապետ, հարգելի՛ գործընկերներ, Շենգավիթ վարչական շրջանում Գետառն արդեն հասնում է Վերին Շենգավիթ 1-ին փողոց 2-րդ նրբանցք հասցեի տարածք, որտեղ պատնեշ են կառուցել ջրի ուղղությունը փոխելու համար: Արդեն 20 տարի է այնտեղ աղբ է հավաքվում, որն ամբողջությամբ արդեն կուտակվել է այդ պատնեշի առջև և հիգիենիայի կանոնների մասին խոսելն անհնարին է:

Կցանկանայի նշել, որ Երևանի քաղաքապետարանի բյուջեից տարեկան 30 միլիոն դրամ գումար է հատկացվում Գետառնի մաքրման աշխատանքների համար: Կարծում եմ, որ այդ գումարը, որը ծախսվում է Գետառնի մաքրման աշխատանքների համար, արդյունք չի տալիս: Ես ունեմ փաստեր, նկարներով կարող եմ ցույց տալ, որ Գետառը մաքրելուց 15 օր հետո այնտեղ նորից նույն խնդիրն է առաջանում: Ճիշտ է մաքրող ընկերությունները Գետառը մաքրում են տրակտորներով, սակայն մի քանի օր անց տիղըն նորից հավաքվում է: Բնակիչներն էլ իրենց հերթին աղբը թափում են գետը:

Այդ գումարը, որպեսզի չծախսվի մաքրման աշխատանքների վրա, կարելի է այդ պատնեշը տեղափոխել այլ վայր: Ես հետազոտել եմ տարածքը, այնտեղ կա անմարդաբնակ մի վայր, որտեղ Հրազդան գետը Գետառին միանալով հասնում է Երևանյան լիճ: Այնտեղ կարելի ցանցապատում կատարել, ինչպես նաև հորդորել բնակիչներին՝ գետն աղբ չթափել:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի կոմունալ տնտեսության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արարատ Խաչիկյանը, խնդրե՛մ:

### **Արարատ Խաչիկյան**

-Հարգարժան քաղաքապե՛տ, ավագանու հարգելի՛ անդամներ, պարո՛ն Ներսիսյան այս հարցի հետ կապված մենք ունեցել ենք քննարկում, ես հիմա պետք է նշեմ, որ ամեն տարվա սկզբին Գետառ և Ողջաբերդ գետերի հուները մաքրվում են:

Աշխատանքներն իրականացնում է «Դավարս» ՍՊ ընկերությունը, թեև պայմանագրով ընդամենը մեկանգամյա մաքրման հայտ է ներկայացված քաղաքապետարանի կողմից, այնուամենայնիվ, տարվա ընթացքում, ըստ ցանկության, եթե կան հատվածներ, որոնք պետք է մաքրվեն, ընկերությունը դա իրականացնում է, ինչի մասին տեղյակ եմ պահել պարոն Ներսիսյանին:

Ինչ վերաբերում է պատնեշի տեղափոխմանը, ապա դա կոմունալ տնտեսության վարչության գործառույթներից դուրս է, անհրաժեշտ է տարածքն ուսումնասիրել, որից հետո կարող ենք պատասխանել:

### **Հայկ Մարության**

- Շնորհակալությու՛ն, հաջորդ հարցը՝ ԻՍ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Իզաբելլա Աբգարյան, խնդրե՛մ:

### **Իզաբելլա Աբգարյան**

-Շնորհակալությու՛ն, երկու հարց ունեմ, որոնք կներկայացնեմ մեկում և կխնդրեմ ուշադիր լինեն տրանսպորտի վարչությունը, առևտրի և սպասարկումների վարչությունը: Հարցս վերաբերում է Երևանում երթևեկության խայտառակ վիճակին, որին նպաստում են նաև կայանատեղիների բացակայությունը և շատ հաճախ, տեղ չլինելու պատճառով, մեքենաները կանգնում են երկրորդ գծի վրա՝ առաջացնելով խցանումներ:

Մենք, եթե այսօր օրենքով սահմանված կարգով տրամադրեցինք ծառայողական կայանատեղի, ապա պարզ չէ, թե ինչու քաղաքում համատարած ապօրինի զավթված են կարմիր գծերը, և դրված են ինքնաշեն նշաններ: Բազմիցս դիմել եմ քաղաքապետարան դեռ որպես սովորական քաղաքացի: Մեկ անգամ իմ աչքի առաջ եկել հավաքել են, սակայն ինձ համար արդեն պարզ է, որ քաղաքապետարանն ի վիճակի չէ կատարել պատշաճ վերահսկողություն, որովհետև նույն օրը կրկին նույն բանն է տեղի ունենում:

Ինչպիսի՞ լուծում է մեզ առաջարկում տրանսպորտի վարչությունը, գուցե նաև իմաստ ունի պատվիրակելու հսկողությունը, օրինակ՝ «Փարկինգ սիթի սերվիս» կամ մեկ այլ ընկերությանը:

Երթևեկությանը վերաբերող մեկ այլ խնդիր ևս. կենտրոնում կան սուպերմարկետներ, որոնք ապրանքի առաքումն իրականացնում են շուրջօրյա՝ կենտրոնական փողոցից, ոչ թե բակային տարածքից: Օրինակ՝ Սարյան փողոցի վրա գտնվող «Նոր Զովք» սուպերմարկետը, որտեղ միշտ ստեղծվում են կուտակումներ, որովհետև առաքիչ մեքենաները կանգնում են երկրորդ, երրորդ գծի վրա: Այդտեղ երկու դպրոց կա և, ի դեպ, շատ վտանգավոր է նաև երեխաների համար, ովքեր փողոցն անցնում են առանց լուսացույցի:

Կինդրեի առևտրի և սպասարկումների վարչության ղեկավարին պատասխանել, արդյոք՝ հնարավոր է տնտեսվարողների հետ հանդիպում ունենալ և պայմանավորվածություն ձեռք բերել առնվազն առաքման ժամերը խանութում իրականացնել այնպես, որ չհամընկնեն, գոնե աշխատանքային պիկ ժամերի հետ, շնորհակալությո՛ւն:

### **Հայկ Մարության**

-Ձեր հարցին կպատասխանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը, խնդրե՛մ:

### **Հենրիկ Նավասարդյան**

-Շնորհակալությո՛ւն հարցի համար: Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչությունը վարչական, իրավական ակտերի առումով տեսչական գործառույթներ չունի և որևէ միջոցառում չի կարող ձեռնարկել: Դա օրենքով սահմանված և լիազորված է ճանապարհային ոստիկանությանը, սակայն Երևանի քաղաքապետարանն անմասն չի մնացել այս գործառույթներից և երբեմն համատեղ ստուգայցեր ենք արել նման մետաղական իրերը փողոցի երթևեկելի մասից վերացնելու համար:

### **Իգարեյլա Աբգարյան**

-Ես կցանկանայի նշել, որ ժամանակին ես, որպես բնակիչ, քաղաքապետարանից եմ պատասխան ստացել, որ Երևանի քաղաքապետարանը նման տնտեսվարողներին սուզանում է 50 000 դրամով, այնպես որ թյուրիմացությունը եկել է քաղաքապետարանից:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հոփսիմե Առաքելյան: Հոփսիմե Առաքելյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության ղեկավար Սուրեն Էյրամջյանին, խնդրե՛մ:

### **Սուրեն Էյրամջյան**

-Հարգելի՛ քաղաքապետ, իմ հարցը վերաբերում է չորրորդ կարգի վթարային շենքերին: Ես ահագանգ եմ ստացել Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի բնակիչներից, եղել եմ տեղում, տեսել շենքի վիճակը: Քանի որ առջևում ձմեռ է և սպասվում են եղանակային ոչ բարենպաստ պայմաններ, ցանկանում եմ տեղեկանալ, արդյոք, կա պլանավորված

Ժամկետներ նոր բնակարաններ հատկացնելու համար: Ի՞նչ ընթացակարգով և ժամկետներում է տեղի ունենում այդ գործընթացը:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, Ձեր հարցին կպատասխանի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը, խնդրե՛մ:

#### **Արսեն Ամյան**

-Շնորհակալություն հարցի համար: Արցախի փողոցի 4-րդ նրբանցքում չորրորդ կարգի վթարային մի քանի շենքեր կան: Այս կապակցությամբ քաղաքապետարանում ձևավորվել է հանձնաժողով, հարցը քննարկվել է նաև Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի հետ:

Այս պահի դրությամբ մենք համադրում ենք համայնքային սեփականություն հանդիսացող գույքի առկա բնակարանային ֆոնդն այն ֆոնդի հետ, որը պահանջվելու է տվյալ բնակիչներին վերաբնակեցնելու համար: Այստեղ կան նաև իրավական խնդիրներ, որոնք քննարկում ենք քաղաքապետարանի իրավաբանական վարչության հետ: Այս շաբաթվա ընթացքում պլանավորում ենք շարունակել քննարկումները, որոնց ընթացքում կլինեն առաջարկություններ: Կարծում ենք այս գործընթացը երկար ժամանակ չի պահանջի: Կան որոշակի խնդիրներ, որոնք առաջիկայում կկարգավորվեն:

#### **Հայկ Մարության**

-Ի՞նչ ժամկետի մասին է խոսքը:

#### **Արսեն Ամյան**

-Պարո՛ն քաղաքապետ, հստակ ժամկետը պարզ կլինի այս շաբաթվա վերջում, որի մասին Ձեզ կզեկուցենք:

#### **Հայկ Մարության**

-Շատ լավ: Պարոն Էյրամջյան, ես Ձեզ կտեղեկացնեմ:

#### **Սուրեն Էյրամջյան**

-Շնորհակալություն, կցանկանայի լսել նաև քաղաքապետի առաջին տեղակալի տեսակետը:

#### **Հրաչյա Սարգսյան**

-Շնորհակալություն, ինչպես ասաց պարոն Ամյանը, նախատեսել ենք, որ Երևանի քաղաքապետարանում առկա որոշ գույքեր կտրամադրվեն վթարային աստիճան ունեցող շենքերի բնակիչներին: Այս պահի դրությամբ առկա են 5 շենք՝ Արցախի փողոցի 4-րդ նրբանցքի հ.10, հ.8, Կողբացու փողոցի՝ հ.41, Շիրակի փողոցի՝ հ.60, և վերջերս չորրորդ կարգի

վթարայնության աստիճան ստացող 4-րդ նրբանցքի 17/1 շենքերն են, որոնց անհրաժեշտ բնակարանների ընդհանուր քանակը 221 է:

2018թ. բյուջեով նախատեսված էր նոր բնակարանների կառուցում՝ Միսակյան փողոց հ. 3 հասցեում, որի համար քաղաքապետարանի բյուջեից հատկացվել է 450.000.000 ՀՀ դրամ: Այս պահին հիմքային աշխատանքներն ավարտման փուլում են, կառույցի ավարտը նախատեսված է մինչև 2020թ. հունիսի 30-ը: Արդյունքում, մենք կունենանք հավելյալ 127 բնակարան և այսպիսով կլուծենք այս պահի դրությամբ առկա 4-րդ կարգի վթարային աստիճան ունեցող շենքերի խնդիրը:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն պարոն Սարգսյան, Արզումանյան փողոցում ևս ունենք նման խնդիր, դրանք ներառված են:

#### **Հրաչյա Սարգսյան**

-Այո՛, դրանք ևս ավելացվել են: Այս պահի դրությամբ տեղի բնակիչները տարհանվել են, նրանց բնակարաններ են հատկացվել վարձակալության հիմունքներով, մինչև բնակարանային ֆոնդից բնակարաններ կհատկացվեն: Շուտով կլինի քաղաքաշինության կոմիտեի եզրակացությունը, որպեսզի հասկանանք, թե շենքն ինչ կարգի վթարայնության աստիճան ունի:

#### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյան, խնդրե՛մ:

#### **Գայանե Մելքոմ Մելքոմյան**

-Շնորհակալություն: Իմ հարցը, ըստ էության, ավելի շատ խնդրի բարձրաձայնում է, բայց հարցի մաս էլ ունի, որի տրամաբանությունը և հիմքերը ես մինչ օրս չեմ հասկացել: Հարցը վերաբերում է Երևանի մայրերին:

Ինձ թվում է բոլորս շատ լավ գիտենք, որ Երևանն այսօր հետիոտնային տեղաշարժման խնդիր ունի: Բոլոր վարչական շրջաններում էլ կան փողոցներ և հատվածներ, որտեղ պարզապես մայթ չի մնացել կամ ի սկզբանե չի նախատեսվել: Մարդիկ հաճախ ստիպված են լինում անցնել ինչ-որ շինությունների արանքներով կամ դուրս գալ փողոց: Տարիների ընթացքում այս խնդիրը լուծվելու փոխարեն ավելի է վատացել:

Վերջին տարիներին կառուցված նորակառույցներ ունենք, այդ թվում քաղաքի կենտրոնում, որոնք կառուցվել են անհասկանալի կերպով: Կառուցապատողին թույլատրվել է ոչ թե իր շենքը հարմարեցնել հանրային ընդհանուր օգտագործման տարածքին, մայթին, այլ

հակառակը՝ մայթը հարմարեցվել է շենքին: Դրա հետևանքով մենք նույնիսկ կենտրոնում, կենտրոնական փողոցներում ունենք հետիոտնային տեղաշարժի խնդիր:

Կարող եմ օրինակ բերել, բազմաթիվ են դրանք, որոնցից մեկը Վազգեն Սարգսյան փողոցի վրա գտնվող «Պիացցա Գրանդեի» շենքն է: Այստեղ, երբ մայթով քայլում ես, այն աստիճանաբար երկու հարթության է բաժանվում, հետո երեք, աստիճաններ են գոյանում և այդտեղ մարդիկ հաճախ ընկնում են, որովհետև վտանգավոր վիճակ է ստեղծվել, որևէ նշան չկա և, եթե մի փոքր անուշադիր լինես, անպայման ոտքդ կոլորես և կընկնես:

Սա միայն մի օրինակ է, բազմաթիվ են նման օրինակները: Ամիրյան փողոցի վրա «Նացիոնալ» հյուրանոցի շենքը, որը մայթի գրեթե կեսը զավթել է, բայց ոչ թե զավթել է որպես սրճարան՝ ժամանակավոր, սեղան, աթոռ, որ կարելի է հետո դրա լուծումը գտնել, այլ մայթի կեսը տրամադրվել է շենքին: Մի ամբողջ հարթություն բարձրացվել է, այսինքն՝ բարակ մայթ է մնացել և դա մասնավորը ծառայեցնում է իր բիզնեսի համար:

Ցանկանում եմ հասկանալ, գոնե վերջին տարիներին կառուցվող և ենթադրաբար հետագայում ևս կառուցվելիք նորակառույց շենքերի պարագայում ի՞նչ քաղաքաշինական նորմերով և սկզբունքներով ենք առաջնորդվում, երբ թույլ ենք տալիս կառուցապատողին ընդհանուր օգտագործման մայթերը հարմարեցնել իրենց շենքին, այդ թվում չապահովելով հետիոտների անվտանգությունը և հարմարությունը:

#### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Միեր Աղաբեկյանը, խնդրե՛մ:

#### **Միեր Աղաբեկյան**

-Բարև Ձեզ, շնորհակալություն՝ն հարցի համար: Մայթերը տարբեր ժամանակահատվածներում տարերայնորեն տարբեր ձևավորումներ են ստացել, կառուցվել կառուցապատողների կողմից: Ներկայումս աշխատանքներ են տարվում, դրանք բարեկարգելու, առավել ևս հետիոտնային շարժման համար ավելի մատչելի դարձնելու համար: Այս պահին հաշվառում է կատարվում կենտրոնական մասերում՝ մայթերն ավելի մատչելի դարձնելու և այդ կառուցապատումները հնարավորինս բարելավելու համար:

#### **Հայկ Մարության**

-Ավելի հստակ կարո՞ղ եք ներկայացնել, այս պահին ինչ գործողություններ են իրականացվում:

#### **Միեր Աղաբեկյան**

-Ուսումնասիրություն է կատարվում՝ հետագա գործողությունների ծրագիր մշակելու համար: Այս պահին մոնիթորինգ է իրականացվում:

### **Հայկ Մարության**

-Մոտավորապես գիտենք ի՞նչ ժամկետում կավարտվի մոնիթորինգը, որպեսզի հասկանանք ինչ ենք անում:

### **Մհեր Աղաբեկյան**

-Մոտավորապես մեկ շաբաթ Կենտրոն վարչական շրջանի տարածքում:

### **Հայկ Մարության**

-Իսկ մնացած վարչական շրջանները:

### **Մհեր Աղաբեկյան**

-Մնացած վարչական շրջանները զուգահեռ կանցկացնենք, 2-3 շաբաթ կտևի:

### **Հայկ Մարության**

-Հրայր Բոչարի փողոցի վրա նույնպես նման խնդիր կա: Այնտեղ կա դպրոց և շենքի բնակիչները բողոքում են, որ երեխաներն ուղղակի փողոցով են դպրոց գնում:

Տիկի՛ն Մելքում Մելքումյան, եկեք սպասենք մեկ շաբաթ, տեսնենք այդ ուսումնասիրություններն ինչ արդյունք են տալիս և ինչ գործողություններ պետք է անենք:

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Գալջյան, խնդրե՛մ:

### **Արմեն Գալջյան**

-Շնորհակալություն՛ն: Հարցս ուզում եմ ուղղել Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին: Մի քանի օր առաջ մի խումբ քաղաքացիներ, ովքեր կենտրոնում զբաղվում են փողոցային ապօրինի առևտրային գործունեությամբ, եկել էին քաղաքապետարան և բողոքում էին, որ ոստիկանությունը և վարչական շրջանի աշխատակիցներն առանց նախազգուշացնելու եկել և առգրավել են իրենց ունեցած վաճառքի իրերը: Հիմնական խնդիրն այն է, որ առանց նախազգուշացնելու եկել և փորձել են արգելել, ինչն իհարկե ճիշտ են արել, բայց պետք է նախազգուշացնեին:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Վիկտոր Մնացականյանը, խնդրե՛մ:

### **Վիկտոր Մնացականյան**

-Շնորհակալություն՛ն հարցի համար: Ձեր հարցն իրենից արդեն իսկ ենթադրում էր պատասխան, քանի որ, ինչպես Դուք նշեցիք, դա ապօրինի, իրավազանց գործունեություն է, որի համար պարտավոր չէինք նախազգուշացնել, չնայած բանավոր զգուշացումներ շատ են եղել:

### **Հայկ Մարության**

Այո՛, իսկապես, ապօրինի վաճառք արտահայտությունն ինքնին ամեն ինչ ասում է: Այսօր մամուլի հարցազրույցի ժամանակ այդ մասին ևս նշեցի: Այդուհանդերձ՝ հաշվի առնելով այն փաստը, որ մարդիկ այդ վաճառքով են իրենց սոցիալական խնդիրները լուծում, մենք այս պահին իրենց հետ միասին փորձում ենք խնդրի լուծման համար ուղի գտնել:

### **Արմեն Գալջյան**

-Երկրորդ հարցս վերաբերում է տրանսպորտի ոլորտին: Խնդրում եմ տալ տեղեկատվություն Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված ավտոկայանատեղիների մասին: Ի՞նչ թիվ են դրանք կազմում և կա արդյոք վարչական տույժ նախատեսված այն անձանց համար, ովքեր չունեն հաշմանդամության կարգ, բայց զբաղեցնում են հաշմանդամների համար նախատեսված տեղերը:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը, խնդրե՛մ:

### **Հենրիկ Նավասարդյան**

-Շնորհակալություն՝ն հարցի համար: Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար կարմիր գծանշումների մեջ առանձնացված է մոտավորապես 110 տեղ: «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով ճանապարհային ոստիկանությանը լիազորություն է վերապահված, համապատասխան վայրում խախտում կատարող ավտոմեքենայի համար վարչական արձանագրություն կազմել: Այն ավտոմեքենան, որը չունի հաշմանդամության մասին համապատասխան տարբերանշան, իրավունք չունի այդ հատվածում կանգնելու և ճանապարհային ոստիկանությունն իրավունք ունի արձանագրություն կազմել:

Երևան քաղաքում շուրջ 117 հաշմանդամի տրված է այդպիսի արտոնություն, նրանք ունեն համապատասխան տարբերանշան, որոնք փակցվում են ավտոմեքենաների վրա, նրանք նաև ազատված են վարձավճարից:

### **Հայկ Մարության**

-Այդ 110 տեղը հավասարապես է բաժանված ամբողջ համայնքով, թե՞ մեծամասնությունը Կենտրոն վարչական շրջանում են:

### **Հենրիկ Նավասարդյան**

-Մեծամասնությունը Կենտրոն վարչական շրջանում են, քանի որ գծանշումների մեծամասնությունը նույնպես Կենտրոն վարչական շրջանում են:



### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Աբրահամյան: Գայանե Աբրահամյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔՍՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսովին, խնդրե՛մ:

### **Էռնեստ Ավանեսով**

-Շնորհակալություն՝ն, առաջին հարցս ավելի շատ տեղեկատվական է, քան հարց: Այն հնչեցնում եմ որպես դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ և որպես ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի անդամ:

Կարծում եմ տեղյակ են վարչական շրջանների հարգարժան ղեկավարները և մյուս գործընկերները, որ ամեն տարի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով դպրոցականների շրջանում առանձին-առանձին իրականացվում են սպորտլանդիա և սպորտակիադա միջոցառումները:

Որպես տեղեկատվություն՝ խնդրում եմ ուսումնասիրել նաև տեղում և, եթե հնարավոր է, հետագայում արձագանքել թվային տվյալներով, իրականացվել է արդյոք դրանք կոնկրետ վարչական շրջանների մակարդակով:

Մի քանի անգամ ինքս որպես մասնակից թիմ ներկայացնող, կարող եմ ասել, որ, ցավոք սրտի, այդ մրցումները վարչական շրջանների մակարդակով տեղի չեն ունենում: Լինում է ընտրողաբար, որը կարգի խախտում է, ընտրվում են դպրոցներ և ասում, որ այս կամ այն սպորտաձևում կամ մրցաձևում դուք կլինեք որպես տվյալ վարչական շրջանի հաղթող և կանցնեք քաղաքային փուլ:

Կարծում եմ սա կարգի կոպիտ խախտում է, նաև երեխաների առողջ ապրելակերպի իրավունքներն են ոտնահարվում, քանի որ սա միայն հաղթողի ընտրության մրցապայքար չէ, ընթացքն էլ է շատ կարևոր: Հետագայում հաջողությունների հասնելու համար թույլերն էլ պետք է մրցեն:

Խնդրում եմ վարչական շրջանի ղեկավարներին կոնկրետ այս հարցին ուշադրություն դարձնել: Կա նախարարի վերջին հրամանը սպորտլանդիա կազմակերպելու վերաբերյալ, Աջափնյակ վարչական շրջանում գտնվող մեր դպրոցի մասով կարող եմ ասել, խոստացան տեղեկացնել, բայց ժամկետները լրացել են, դեռևս ոչ մի տեղեկություն չկա:

### **Հայկ Մարության**

-Ձեր հարցը վարչական շրջանների ղեկավարներին է ուղղված, թե՞ սպորտի բաժնի պետին:

### **Էռնեստ Ավանեսով**

-Պարո՛ն քաղաքապետ, տարօրինակ ձևով վարչական շրջանների սպորտի բաժինները ենթարկվում են քաղաքապետարանի հանրակրթության վարչությանը:

### **Հայկ Մարության**

-Հանրակրթության վարչության պետ Աննա Ստեփանյան, խնդրե՛մ:

### **Աննա Ստեփանյան**

-Նմանատիպ միջոցառումները՝ սպորտլանդիաները և այլ տիպի մրցաշարերը, որոնք կազմակերպվում են սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից, հրամանն ստանալուց հետո այն հղում ենք բոլոր վարչական շրջաններին: Այնուհետև վարչական շրջաններում իրականացվում է մրցույթ, թե ինչ մակարդակով են դրանք իրականացվում, չեմ կարող մեկնաբանել:

Մեզ ներկայացվում են վարչական շրջանների հաղթող թիմերը, այնուհետև այդ հաղթող թիմերով ողջ Երևանի մասշտաբով իրականացվում է այդ մրցաշարը՝ կոնկրետ սպորտլանդիան: Բավականին հետաքրքիր և գեղեցիկ միջոցառում է ստացվում:

Այլ հարց է, թե վարչական շրջանն ինչպես է այն իրականացրել և ինչ թիմ է մեզ ներկայացրել, դրանց հետքով կարելի է, թերևս, գնալ, պարզել: Չգիտեմ, թե որքանով է հավաստի Աջափնյակ վարչական շրջանի այս տեղեկատվությունը, բայց գիտեմ որ թե՛ մանկապարտեզներում, թե՛ դպրոցներում իրականացվում են այս մրցույթները: Դպրոցները մշտապես արձագանքում են և մասնակցություն են ունենում, այնուհետև մեզ ներկայացնում են հաղթող թիմերը: Վարչական շրջանների մասով իրականացնում են կրթության և սպորտի բաժնի պետերը:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, եթե ավելացնելու բան ունեք, խնդրե՛մ: Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Իդա Խաչատրյան:

### **Իդա Խաչատրյան**

-Հարգարժան քաղաքապետ, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինն սպորտի բաժնի հետ համատեղ չորս տարի անընդմեջ հատուկ կարիքներով երեխաների համար կազմակերպել է մինի ֆուտբոլի մրցաշար, որին մասնակցել են ոչ միայն Երևանի քաղաքապետարանի ենթակայության հատուկ դպրոցները, այլև՝ կրթության և գիտության նախարարության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության խնամքի հաստատության երեխաները: Բավականին լավ արձագանք է ունեցել միջոցառումը, կառավարության կողմից ընդունվել է որպես տարեկան միջոցառում: Այս տարի հերթափոխը հանձնվել է սպորտի բաժնին:

### **Հայկ Մարության**

-Փաստորեն, խնդիրը վերաբերում է վարչական շրջաններում անցկացվող փուլին: Վարչական շրջանների նորանշանակ ղեկավարների օրոք դեռ այսպիսի միջոցառումներ չեն անցկացվել, ուստի՝ խնդրում եմ միջոցառումների անցկացմանն ուշադիր լինել, արդարության սկզբունքը շատ կարևոր է, մեր երեխաները հենց այդ սկզբունքով պետք է մեծանան: Խնդրե՛մ երկրորդ հարցը:

### **Էռնեստ Ավանեսով**

-Որոշ ժամանակ առաջ սոցիալական ցանցում այս հարցը նույնպես քննարկման առարկա էր դարձել և բավականին մեծ արձագանք էր ստացել: Խոսքը վերաբերում է աստիճանավանդակ ունեցող բազմաբնակարան շենքերի մուտքերի մոտ թեքահարթակներ ստեղծելուն, ինչը կօգնի որոշակի թեթևացնել անվասայլակներով տեղաշարժվող քաղաքացիների և մանկասայլակներով մայրերի հոգսը:

Ես բնակվում եմ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում և այդ խնդիրը կա գրեթե բոլոր շենքերում: Մեկ շենքի կտրվածքով եթե դիտենք, կարծում եմ մեծ գումար չի պահանջվի թեքահարթակ կառուցելու համար, հարկավոր է մի քանի սյուն, ցեմենտ և ավազ: Պարզապես խնդրում եմ վարչական շրջանների ղեկավարներին որոշակի քայլեր ձեռնարկել:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն: Կարծում եմ, սա ավելի շատ ոչ թե վարչական շրջանների մասով է, այստեղ պետք է լինի քաղաքապետարանի հստակ դիրքորոշումը: Շինարարության և բարեկարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գրիգոր Հարությունյան, ներկայացրեք խնդրեմ:

### **Գրիգոր Հարությունյան**

-Հարգարժան քաղաքապետ, 2018թ. ընթացքում կառուցվել է թվով 200 թեքահարթակ: Երևան քաղաքում ողջ տարածքով կա 2210 թեքահարթակ և 80 գոգավոր, դեղին սալիկներով թեքահարթակ՝ տեսողական խնդիրներ ունեցող քաղաքացիների համար:

### **Էռնեստ Ավանեսով**

-Դուք այդ հաշվարկի մեջ ներառում եք նաև այն թեքահարթակները, որոնք ստորգետնյա անցումներում են և պարզապես թեքություն ունեն:

### **Գրիգոր Հարությունյան**

-Ո՛չ, ստորգետնյա անցումների թեքահարթակները դրանց մեջ չեն մտնում: Խոսքը մայթերի և շենքերի մուտքի մոտ գտնվող թեքահարթակների մասին է:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նարինե Խաչատուրյան, խնդրե՛մ:

## **Նարինե Խաչատուրյան**

-Շնորհակալություն՝ն, հարցս մշակույթի ոլորտին է վերաբերում: Պարո՛ն քաղաքապետ, Կանադայում բնակվում է բացառիկ քանդակագործ՝ Արտո Չաքմաքչյանը: Սովետական իշխանության ժամանակ, լինելով ներգաղթյալ, նա նորից բռնեց արտագաղթի ճանապարհը, որովհետև սովետական իշխանությունները քանդեցին նրա հեղինակած Կոմիտասի քանդակը, որը գտնվում էր Մերգեյյան ինստիտուտի մոտ: Նա հեռացավ հայրենիքից:

Պարոն Մեսչյանը քիչ առաջ տնաշինական ծրագրերի մասին էր խոսում, որը պետք է նպաստի ներգաղթին, հայրենադարձությանը: Կարծում եմ, որ այդ ներգաղթը պետք է լինի ոչ միայն մարդկային, պետք է տեղի ունենա նաև մշակութային ներգաղթ:

2000թ. Արտո Չաքմաքչյանը, ում քանդակները տեղադրված են աշխարհի մեծագույն քաղաքներում, Երևանին նվիրեց «Քայլող մարդը» քանդակը և սրտատրոփ սպասում էր, թե այն երբ պետք է տեղափոխվի, տեղադրվի Երևանում, որի համար տարածք էր նախատեսվել Հյուսիսային պողոտայում: Նրան անվերջ խաբում էին, քանդակն այդպես էլ չտեղադրվեց և նա հիմա հուսահատված ապրում է Կանադայում:

Արտո Չաքմաքչյանն այն բացառիկ քանդակագործներից է, որի աշխատանքների համար ՅՈՒՆԵՍԿՕ-ն անհատական ցուցահանդես է կազմակերպել Փարիզում:

Ես մտավախություն ունեմ, քանի որ կա տեղեկատվություն այն մասին, որ նա մտադիր է այդ քանդակը նվիրել Փարիզին:

Մենք արդարության մասին ենք խոսում, որն իրենից ենթադրում է նաև սոցիալական արդարություն, պետք է վերականգնել արդարությունն արվեստագետի նկատմամբ: «Քայլող մարդը» սիմվոլիկ է, մեր «թավշյա հեղափոխությունը» քայլող մարդու խորհրդանիշն է:

Երևանը 2800 տարեկան է: Ես կարծում եմ, անհրաժեշտ է կապ հաստատել քանդակագործի հետ և ջանք չխնայել, որպեսզի «Քայլող մարդը» քանդակը վերջապես տեղափոխվի Երևան:

## **Հայկ Մարության**

-Ի՞նչն էր պատճառը, որ չէին տեղադրում:

## **Նարինե Խաչատուրյան**

-Այս իրադարձությունները տեղի են ունեցել այն շրջանում, երբ Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը Նարեկ Սարգսյանն էր: Նա բազմիցս նշում էր, որ շուտով քանդակը կտեղափոխվի, կտեղադրվի Հյուսիսային պողոտայում: Ենթադրում եմ, որ «Տաշիր սթրիթ» առևտրի կենտրոնի վերգետնյա կառույցները խանգարեցին կամ գուցե կան այլ պատճառներ, որոնց մասին տեղյակ չենք:

### **Հայկ Մարության**

-Հարցին կպատասխանի Երևանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

### **Տիգրան Վիրաբյան**

-Ցանկանում եմ տեղեկացնել, որ «Կոմիտաս 150» պետական հանձնաժողովի վերջին նիստում այս հարցը ևս քննարկվել է: Ես վստահ եմ, որ «Կոմիտաս 150» միջոցառումների շրջանակներում մշակույթի նախարարության և միջոցառումները համակարգող հանձնաժողովի հետ համատեղ հնարավոր կլինի այս խնդիրը լուծել:

### **Նարինե Խաչատուրյան**

-«Քայլող մարդը» քանդակի մասին է խոսքը:

### **Տիգրան Վիրաբյան**

-Արտո Չաքմաքչյանի քանդակների մասի՞ն է խոսքը:

### **Նարինե Խաչատուրյան**

-Շնորհակալությու՛ն, երկրորդ հարցս վերաբերում է Կոմիտասի և Թումանյանի 150-ամյակներին, որոնք կնշվեն հաջորդ տարի: Քանի որ Թումանյանի հոբելյանը փետրվար ամսին է, ես կցանկանայի փաթեթ ներկայացնել, թե Հովհաննես Թումանյանի թանգարանն ինչ առաջարկ ունի Երևանի քաղաքապետարանին: Հնարավորության դեպքում խնդրում եմ այն ներառել օրակարգ:

### **Հայկ Մարության**

-Պարոն Վիրաբյանը հանձնաժողովի անդամ է և մշտապես զբաղվում է այդ հարցով, կարող եք նրա հետ քննարկել այդ հարցը:

### **Տիգրան Վիրաբյան**

-Նշեմ, որ 2019թ. բյուջեում փորձել ենք ներառել կարևոր հոբելյանական միջոցառումների իրականացման համար միջոցներ, որովհետև բյուջեի նախագծում, որը տրված էր ինձ, այդ մասով ծախսեր նախատեսված չէին:

Ես խորհրդակցեցի քաղաքապետի հետ, որոշեցինք բյուջեի ծախսերում ներառել կարևոր հոբելյանների համար նախատեսված միջոցներ: Այդ կարևոր հոբելյանների շարքում են ոչ միայն Թումանյանի ու Կոմիտասի հոբելյանները, այլև՝ մի շարք արվեստագետների:

### **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լուսինե Գևորգյան, խնդրե՛մ:

### **Լուսինե Գևորգյան**

-Շնորհակալ եմ, պարո՛ն քաղաքապետ, հարցս վերաբերում է ավտոկայանատեղիների վերահսկողությանը: Ինչպես հասկացանք այդտեղից անմիջական

մուտքեր են լինում քաղաքապետարանի բյուջե: Յանկանում եմ հասկանալ, թե ի՞նչ գործիքներով է կատարվում վերահսկողությունը: Ճիշտ է, պարոն Նավասարդյանը նշեց, որ իրենց վարչությունը տեսչական գործառույթներ չունի, սակայն ուզում եմ հասկանալ, երբ մենք կնքում ենք պայմանագիր, թեկուզ 100 000-դրամանոց այդ պայմանագիրը, ո՞վ է վերահսկում և ի՞նչ գործառույթներ ունենք դրա հետ կապված: Միգուցե խախտում ենք պայմանագիրը:

#### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն, հարցին կպատասխանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը, խնդրե՛մ:

#### **Հենրիկ Նավասարդյան**

-Ավտոկայանատեղիների մասով քաղաքի բյուջե մուտքագրվող գումարը վերաբերում է միայն ծառայողական ավտոկայանատեղիներին, որոնք Երևան քաղաքի ավագանին է հաստատում: Գումարները, որոնք մուտք են արվում, յուրաքանչյուր մեկ ավտոմեքենայի կայանման տեղի համար է նախատեսված: Գործընթացի կազմակերպման համար տվյալ կազմակերպությունը ներկայացնում է համապատասխան փաստաթուղթ, տեղի հանույթի սխեմա, որտեղ յուրաքանչյուր մեկ միավոր մեքենայի համար նորմաներով նախատեսված է 7.5մ երկարություն: Տեղում չափում ենք ամբողջ տարածքի երկարությունը և ներկայացված հանույթը, համապատասխան քանակության բավարարելու դեպքում ընթացքը տրվում է, սահմանված չափով գումար մուտք է արվում բյուջե, որից հետո հարցը ներկայացվում է Երևանի ավագանու քննարկմանը:

#### **Հայկ Մարության**

-Տիկի՛ն Գևորգյան, Ձեր հարցը գումարի՞ վերահսկողության մասին էր:

#### **Լուսինե Գևորգյան**

-Ո՛չ, երբ պայմանագրի շրջանակներում այդ տարածքը տրամադրվում է, արդյոք վերահսկվո՞ւմ է տարածքի ճիշտ օգտագործումը: Տիկին Իգարբեյլյան նույնպես նշեց, որ ինքնակամ երկարեցնում են այդ տարածքները, լրացուցիչ սարքեր են տեղադրվում, որի պատճառով մուտքը կայանատեղի դժվարանում է: Ինչու՞ քաղաքապետարանը չունի ինչ-որ վերահսկողություն իրականացնող գործիք, որով կարողանանք այդ տրամադրված պայմանագրերի շրջանակներում տարածքները վերահսկել:

#### **Հենրիկ Նավասարդյան**

-Ինչպես նշեցի, մենք տեսչական իրավունք չունենք և չենք կարող արձանագրություն կազմել այդ մետաղական իրերի տեղադրման մասով: Դա ճանապարհային ուստիկանության գործառույթն է, որն իրենց կողմից հաճախակի իրականացվում է:

## **Լուսինե Գևորգյան**

-Փաստացի ստացվում է, որ մենք այսօր չունենք նախադեպ, որով պայմանագիրը վաղաժամկետ լուծարել ենք կամ վերահսկել ենք մեր գործընկերոջ բարեխղճությունը:

## **Հենրիկ Նավասարդյան**

-Ո՛չ, այդպիսի դեպք չի եղել: Նման հարց բարձրացվելու դեպքում, դա պետք է ներկայացվեր Երևանի ավագանու քննարկմանը և լուծարվեր:

## **Հայկ Մարության**

-Հասկանալի է, եթե Երևանի քաղաքապետարանը նկատի, որ խախտում է եղել, ինչ-որ երկաթի կտոր է դրվել, իրավունք չունի այդ երկաթի կտորը հեռացնելու կամ տուգանելու:

## **Հենրիկ Նավասարդյան**

-Երևանի քաղաքապետարանը տուգանելու իրավունք չունի: Մենք ճանապարհային ոստիկանության հետ համատեղ երբեմն այդ շրջայցերին մասնակցում ենք, բայց տուգանելու իրավունք չունենք:

## **Հայկ Մարության**

-Ես հարցն ավելի հստակ տվեցի, որպեսզի և՛ հարցը, և՛ պատասխանը հստակ հնչի և հանրությունն իրազեկվի, քանի որ ուղիղ եթերում ենք:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հասմիկ Խաչունց, խնդրե՛մ:

## **Հասմիկ Խաչունց**

-Շնորհակալություն, քանի որ իմ հարցն ուղղված էր Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ պարոն Մեսյանին, իսկ նա այս պահին դահլիճում չէ, ես հարցս գրավոր կներկայացնեմ:

## **Հայկ Մարության**

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյան, խնդրե՛մ:

## **Մեսրոպ Պապիկյան**

-Պարո՛ն քաղաքապետ, հարցս ուղղված է Ձեզ: Այն վերաբերում է Ավան, Շենգավիթ Նորք-Մարաշ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարներ նշանակելուն: Երբ եք պլանավորում կատարել այդ նշանակումները:

Ես Ավան վարչական շրջանի բնակիչ եմ, այս ընթացքում հարյուրավոր քաղաքացիներ են մոտեցել ինձ, ովքեր ունեն տարբեր խնդիրներ և հարցեր, բայց չգիտեն ինչ անել՝ սպասեն, թե չսպասեն նոր ղեկավարների: Իրենց խնդիրները և հարցերն այն ժամանակ լուծում չեն ստացել և իրենք անորոշ վիճակում են, չգիտեն ինչ անել: Վարչական շրջանների աշխատակիցները նույնպես անորոշության մեջ են, քանի որ չգիտեն թե ովքեր են իրենց կառույցների ղեկավարները և երբ են նշանակվելու:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն հարցի համար: Այս պահին Ձեր նշած վարչական շրջաններն ունեն իրենց ղեկավարները, ովքեր համապատասխանաբար ղեկավարում են իրենց վարչական շրջանները: Բնակիչները բոլոր հարցերով կարող են դիմել իրենց: Վարչական շրջանների ղեկավարները, եթե ինչ-որ պատճառներով չլուծեն այդ խնդիրները, ապա կպատժվեն օրենքի խստությամբ: Այսօր թե՛ Երևանի քաղաքապետարանի, թե՛ վարչական շրջանների աշխատակիցները պետք է աշխատեն օրենքի սահմաններում, հակառակ դեպքում կպատժվեն օրենքի ամբողջ խստությամբ:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արսեն Կարապետյան, խնդրե՛մ:

### **Արսեն Կարապետյան**

-Ես հանում եմ իմ հարցը, քանի որ այն նույնպես ուղղված էր պարոն Մեսչանին:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էդգար Բարսեղյան, խնդրե՛մ:

### **Էդգար Բարսեղյան**

-Առաջին հարցիս պատասխանը մասնակի ստացել եմ մանկապարտեզներին սնունդ մատակարարելու վերաբերյալ և, կարծես թե, կոնցենսուսի եկանք, որ հարկավոր է միանշանակ խստացնել վերահսկողությունը, որը պետք է վերաբերի ոչ միայն մատակարարվող հացին, այլ առհասարակ՝ սննդին:

Ինձ էլ են ահազանգեր եղել, որ սնունդ մատակարարող աշխատակիցները Կենտրոն վարչական շրջանի մանկապարտեզներին կարագ մատակարարելիս զգուշացրել են, որ կարագն օգտագործեն միայն ճաշերի մեջ, քանի որ սպրեդ է: Այստեղից մի հետևություն. երևի պետք է խստացվեն թե՛ վերահսկողությունը, թե՛ տեղերի անցկացման չափանիշները, որպեսզի դեռ մանկուց չթունավորենք մեր երեխաներին, ովքեր մեր ապագան են: Այս հարցի պատասխանը չեմ ակնկալում, պարզապես հնչեցրի:

Երկրորդ հարցս, պարոն քաղաքապետ, անձամբ Ձեզ է ուղղված ի պաշտոնե: Եթե հնարավոր է, Երևան քաղաքի ոստիկանապետի հետ քննարկեք ավտոմեքենաների՝ մայթերին կայանելու համար տուգանքի հնարավորինս խստացման հարցը, չէ որ այդտեղից էլ է ձևավորվում մայթերը հետիոտներին վերադարձնելու մշակույթը: Շնորհակալություն՝ն:

### **Հայկ Մարության**

-Շնորհակալություն՝ն: Ոչ միայն մայթերին, կնշեմ նաև հետիոտնային անցումների համար նախատեսված գծանշումների վրա կայանած ավտոմեքենաների մասին, որն



անթույլատրելի է: Այս առումով ճանապարհային ոստիկանության հետ աշխատանքներ են տարվում, հետևելով Ձեր հորդորին՝ նորից այդ հարցը կբարձրացնեմ:

Մանկապարտեզների մասով հանրակրթության վարչության պետը կպատասխանի, խնդրե՛մ տիկին Ստեփանյան:

### **Աննա Ստեփանյան**

-Հարգելի՛ քաղաքապետ, ցանկանում եմ արձագանքել սննդի վերաբերյալ բարձրացված հարցին: Այս պահին մեզ դիտում են նաև ծնողներ, ովքեր ունեն մանկապարտեզ հաճախող երեխաներ, լսելով այս ամենը՝ նրանց անհանգստությունը մեծանալու է: Տպավորություն է ստեղծվում, որ չենք վերահսկում մանկապարտեզներին մատակարարվող սննդի որակը: Պետք է չհամաձայնեմ և ասեմ, որ քաղաքապետարանի վերահսկողության և հանրակրթության վարչությունների, ինչպես նաև մանկապարտեզների տնօրենների կողմից մշտապես վերահսկվում է մատակարարվող սննդի որակը:

Հասկանում եմ կան անձնական խնդիրներ, որոնք ունեն տողատակեր կապված թե՛ հացի, թե՛ կարագի որակի հետ: Կարագը մշտապես ուղարկվել է լաբորատոր ստուգման և այս պահին նշվածը չի համապատասխանում իրականությանը:

Ցանկանում եմ հորդորել, որ այն ինչ կապված է սննդի, մանկապարտեզի և ծնողի հետ, զգուշորեն արտահայտվել, անպայման ստուգել, նոր միայն բարձրաձայնել: Այս պահին մեզ դիտում են մոտավորապես 30 000 երեխայի ծնող և տպավորություն է ստեղծվելու, որ մանկապարտեզներին մատակարարում ենք իրենց նկարագրին չհամապատասխանող սնունդ: Մշտապես վերահսկվում է մանկապարտեզ մատակարարվող սնունդը: Այս պահին, իհարկե, կան խնդիրներ, որոնց կարելի է անդրադառնալ, բայց ասել, որ այն սնունդը, որը մատակարարվում է, չի համապատասխանում իրականությանը, համամիտ չեմ:

Խնդրում եմ և հորդորում զգուշորեն արտահայտվել, հատկապես մանկավարժների մասին խոսելիս, բարձրաձայնելիս հիշենք, որ այն մանկավարժները, ովքեր աշխատում են նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում նվիրյալներ են, իրենց գործը պատվով են կատարում և եթե կան խնդիրներ, ապա ճշտելուց հետո, նոր այստեղ բարձրաձայնել:

### **Էդգար Բարսեղյան**

-Տիկին Ստեփանյան, նախ Ձեր ուսուցողական տոնն այդքան էլ հարիր չէր և պետք չէր զգուշավորության հորդորներ անել, քանի որ զգուշավորության հորդորը մեր երեխաների առողջությանը զգուշորեն վերաբերվելն է, քանի որ առաջին հերթին դա է կարևորը: Փաստերը ցույց են տալիս, որ ստուգումները, որոնց մասին խոսում եք, արդյունավետ չեն եղել: Իմ ասածը չունի տողատակ, ընդամենը փաստի արձանագրություն է: Կարող եմ

վստահեցնել, որ մատակարարող ընկերության ներկայացուցիչն անձամբ է ասել, որ այս կարագը երեխաներին չտաք, օգտագործեք միայն ճաշի մեջ: Ինչ վերահսկողության մասին է խոսքը: Շնորհակալություն՝ն:

### **Հայկ Մարության**

-Այս հարցի վերաբերյալ իմ դիտարկումն անեմ. ես ոչ մեկի շահերը չեմ պաշտպանում, պաշտպանում եմ միայն մեր համաքաղաքացիների շահերը: Մատակարարող ընկերության ներկայացուցիչը, եթե զգուշացնում է, որ կարագը մի տվեք երեխաներին, ինձ համար դա ոչինչ չի նշանակում, որովհետև այդ մարդը մասնագետ չէ, միգուցե մատակարարող ընկերության տնօրենի հետ վատ հարաբերության մեջ է և այլն:

Ուստի՝ հիմնվենք միայն համապատասխան գերատեսչությունների ուսումնասիրությունների և եզրակացությունների վրա: Իմ հորդորն է բոլորին, որպեսզի անհիմն հայտարարություններ չանել, բայց միևնույն ժամանակ, այո, առաջացած խնդիրների մասին բարձրաձայնենք և պահենք մեր հսկողության տակ:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Հովհաննիսյան: Լևոն Հովհաննիսյանը բացակայում է դահլիճից:

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի՛ անդամներ, Երևանի ավագանու 1-ին նստաշրջանի 2-րդ նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալություն՝ն, ցտեսություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ.ՄԱՐԴԻԹՅԱՆ**